

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչություն առաջատար մասնագետ,
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավաբանության և միջազգային հարաբերությունների դեպարտամենտի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ



ՆՈՐ ԿԱՄ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՍՄԱՆՔՆԵՐՈՎ ԲԱՅԱՌԻԿ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄՅՈՒՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՏ (ՀՀ ԶՐԵՍԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԵՄՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Սույն հոդվածում ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և նախագծի համեմատախրավական վերլուծության լույսի ներքո ներկայացվում են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով օրինական ուժի մեջ մտած վերջնական իրավական ակտերի վերանայման ինստիտուտի և դատական վերանայման այլ կառուցակարգերի միջև փոխհարաբերակցության հետ կապված հիմնահարցերը, մասնավորապես, հեղինակի կողմից ուսումնասիրվում են այդ կառուցակարգերի առանձնահատկությունները, մանրություններն ու տարբերությունները, վեր են հանվում գործող կարգավորումներում առկա թերությունները և նախագծում դրանց տրված հնարավոր լուծումները, ինչպես նաև ներկայացվում են օրենսդրական որոշ առաջարկություններ:

Հեղինակը եզրակացնում է, որ չնայած այն հանգամանքին, որ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման մեխանիզմը ունի որոշ ընդհանուր գծեր դատական վերանայման մյուս ձևերի հետ, այնուամենայնիվ այն էականորեն տարբերվում է դրանցից և հանդիսանում է վերանայման ինքնուրույն վարույթ:

Հիմնարար քառեր - նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, վերաքննություն, վճռաբեկություն, հիմնարար խախտում, գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտեր:

Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերջնական իրավական ակտերի¹ վերանայման ինստիտուտի ծագման և զարգացման պատմությունը վկայում է, որ այն տարբեր ժամանակահատվածներում օրենսդրի տեսանկյունից ոչ միշտ է միանշանակ ընկալվել՝ դրսևորվելով կամ որպես քրեական դատավարության առանձին և ինքնուրույն փուլ, կամ կորցնելով ինքնուրույնությունը, ենթարկվել է միասնական իրավական կարգավորման դատական վերանայման այլ կառուցակարգերի հետ:

Այսպես, օրինակ, ի տարբերություն ՀՍՍՀ 1961 թվականի օրենսգրքի, որը վճռաբեկ, հսկողական և նոր երևան եկած հանգամանքների² հետևանքով գործերի նորոգման վարույթներից յուրաքանչյուրին հատկացրել էր առանձին գլուխ, և այդ օրենսգրքի իմաստից բխում էր, որ դրանցից յուրաքանչյուրը համարվում էր քրեական դատավարության առանձին փուլ, ապա ՀՀ քրեական դատավարության սկզբնական՝ 1998 թվականի, խմբագրությամբ օրենսգիրքը դրանք միավորել էր վճռաբեկ վարույթի մեջ՝ սահմանելով վճռաբեկ դա-

տարանում քրեական գործերի քննության միասնական կարգ անկախ բողոքարկման հիմքերից³: Ահա 2007 թվականին տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններից հետո (նոյեմբերի 28, ՀՕ-270-Ն) քննարկվող ինստիտուտը տարանջատվեց վճռաբեկ վարույթից՝ ենթարկվելով ինքնուրույն կարգավորման, իսկ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում⁴ (այսուհետ՝ Նախագիծ) այն արդեն «նոր հանգամանքներ» եզրույթի ներքո ենթարկվել է միասնական իրավական կարգավորման հիմնարար խախտման հիմքով դատական ակտերի վերանայման հետ մեկտեղ:

Վերոգրյալի հիման վրա կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի (այսուհետ՝ Գործող օրենսգիրք) և Նախագծի համեմատախրավական վերլուծության լույսի ներքո նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման ինստիտուտի փոխհարաբերակցությունը դատական վերանայման այլ ձևերի հետ դրանց առանձնահատկությունների, ինչպես նաև մանրությունների ու տարբերությունների տեսանկյունից ներկայացնում է որոշակի իրավական

հետաքրքրություն:

Գործող օրենսգրքի ուսումնասիրությունից հետևում է, որ դատական վերանայման կառուցակարգերի շրջանակներում օրենսդիրը դրսևորել է հետևյալ ընդհանրական մոտեցումը. վերանայման վերաքննիչ և վճռաբեկ մեխանիզմներին հաղորդելով լայն իմաստ՝ շաղկապել է վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններում իրականացվող նաև այլ՝ օրինակ, նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով, հիմնարար խախտման (գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը)՝ հիմքով կամ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման հետ՝ չսահմանազատելով վերաքննությունն ու վճռաբեկությունը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում իրականացվող այլ գործունեությունից:

Ընդ որում, եթե նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման և վճռաբեկության (վերաքննության) սովորական (բնականոն) վերանայման կառուցակարգերի հարաբերակցության ժամանակ կարելի է խոսել դրանց միայն ոչ տեղին փոխկապակցման մասին՝ նկատի ունենալով, որ բացառիկ վերանայման նշյալ վարույթը՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ, կարգավորվել է Գործող օրենսգրքի առանձին բաժնում, ապա նույնը չի կարելի ասել վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում իրականացվող այլ՝ օրինակ, հիմնարար խախտման հիմքով կամ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման մասին, քանի որ վերջիններս օրենսդրի կողմից վճռաբեկության (վերաքննության) հետ մեկտեղ ենթարկվել են միասնական իրավական կարգավորման:

Ինչպես, իրավաբաններն նշվում է, վերաքննությունը և վճռաբեկությունը՝ որպես վերանայման մեխանիզմներ, գործադրվում են միայն գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի նկատմամբ, ուստի Գործող օրենսգրքի վերաքննիչ (վճռաբեկ) վարույթը կանոնակարգող համապատասխան բաժինների նորմերով կարգավորվող վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի ցանկացած գործունեություն չէ, որ իրականացվում է վերանայման վերաքննիչ կամ վճռաբեկ եղանակի հիման վրա:

Դրանից հետևում է, որ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում իրականացվող այլ՝ օրինակ, գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած կամ օրինական ուժի մեջ չմտած և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանա-

յունը չի կարող դիտարկվել որպես վերաքննություն կամ վճռաբեկություն, հակառակ դեպքում ստեղծվում է տերմինաբանական շփոթ, և խախտվում այդ վերանայման կառուցակարգերի էությունը:

Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման ու վերաքննություն (վճռաբեկություն) սովորական վերանայման կառուցակարգերի ոչ տեղին փոխկապակցման մասին են վկայում Գործող օրենսգրքի 380.1-րդ և 406-րդ հոդվածների 1-ին մասերի 2-րդ կետերը, 381-րդ և 407-րդ հոդվածների 1-ին մասերի համապատասխանաբար 5.1-րդ և 5-րդ կետերը, ըստ որոնց՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքը նախատեսվել է որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերելու հիմքեր, ինչպես նաև դիտարկվել որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների բովանդակության մաս (ոչ իրավաչափ զուգակցման մասին են վկայում նաև Գործող օրենսգրքի այլ հոդվածները՝ օրինակ 376-րդ հոդվածի 1-ին մասը, 376.1-րդ հոդվածի 2.1-րդ կետը): Այստեղ, իհարկե, ոչ տեղին փոխկապակցումը չի վերաբերում այն դեպքերին, երբ նոր փաստական կամ իրավական հանգամանքը ծագում է դատական ակտի կայացման և դրա՝ օրինական ուժի մեջ մտնելու ժամանակահատվածում, քանի որ այդ ժամանակ դատական ակտը կարող է վերանայվել վերաքննության կամ վճռաբեկության, իսկ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո միայն նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման կարգով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ բացառիկ վերանայման կառուցակարգով վերանայման են ենթակա միայն օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերը:

Օրենսդրի նման գործելաճի արդյունքում առաջացել են նաև ակնհայտ հակասություններ: Այսպես, օրինակ, եթե Գործող օրենսգրքի 426.2-րդ հոդվածը սպառիչ կերպով սահմանել է նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման բողոքարկման սուբյեկտների շրջանակը՝ այդպիսին չհամարելով, օրինակ, մեղադրողին կամ վերադաս դատախազին, ապա 376-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել է, որ վերջիններս նույնպես համարվում են այդ հիմքերով բացառիկ վերանայման բողոքարկման սուբյեկտներ:

Ինչ վերաբերում է վերոնշյալ հարցերի շուրջ Նախագծում սահմանված կարգավորումներին, ապա պետք է նշել, որ Նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դատական վերանայման կառուցակարգերի հստակ սահմանազատման և կանոնակարգման նպատակով դրանում կատարվել են մի շարք էական ու սկզբունքային փոփոխություններ:

Այսպես, Նախագծի 11-րդ բաժնի ուսումնասիրությունից հետևում է, որ, ի տարբերություն Գոր-

ծող օրենսգրքի, Նախագծի առանձին գլուխներով հստակ կանոնակարգվել և իրարից տարանջատվել են գործն ըստ էության լուծող և չլուծող, օրինական ուժի մեջ մտած և չմտած դատական ակտերի վերանայման մեխանիզմները: Մասնավորապես, գործն ըստ էության լուծող և չլուծող (Նախագծի տերմինաբանությամբ՝ եզրափակիչ և ոչ եզրափակիչ) դատական ակտերի վերանայման կառուցակարգերի տարանջատման նպատակով Նախագծում նախատեսվել է դատական վերանայման այնպիսի նոր կառուցակարգ, ինչպիսին է վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում հատուկ վերանայումը, իսկ ինչ վերաբերում է հիմնարար խախտման հիմքով դատական ակտերի վերանայմանը, ապա վերջինս՝ որպես գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բացառիկ վերանայման մեխանիզմ, ի տարբերություն Գործող օրենսգրքի՝ սահմանվել է Նախագծի առանձին՝ «Բացառիկ վերանայում», վերտառությամբ գլխում՝ դրանով իսկ ընդգծելով սույն վարույթի ինքնուրույնությունը և, որպես իրավական որոշակիության սկզբունքից նահանջ, փոխկապակցվածությունը բացառիկ վերանայման մյուս՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վարույթի հետ:

Նախագծի ուսումնասիրությունից հետևում է նաև, որ դատական վերանայման կառուցակարգերի տարանջատման արդյունքում Գործող օրենսգրքի նման ոչ իրավաչափ կերպով այլևս չեն փոխկապակցվել նաև վերանայման վերաքննիչ (վճռաբեկ) և նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով բացառիկ վերանայման մեխանիզմները, սակայն ամեն դեպքում ցանկանում ենք նշել, որ, մեր կարծիքով, Նախագծի 358-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նույնիսկ բացառության կարգով վերաքննության և վճռաբեկության կիրառման դեպքերի համար բացառիկ վերանայման դեպքերի սահմանումը այնքան էլ ճիշտ չէ, քանի որ այդ բացառիկ դեպքերում իրականացվում է ոչ թե վերաքննություն կամ վճռաբեկություն, այլ բացառիկ վերանայում վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում:

Այսպիսով, նշենք, որ ի տարբերություն Գործող օրենսգրքի՝ Նախագծում կատարված նման փոփոխությունների արդյունքում վերաքննություն և վճռաբեկություն վերանայման մեխանիզմները հստակորեն տարանջատվել են վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում իրականացվող հատուկ և բացառիկ վերանայումներից՝ այլևս չստեղծելով տերմինաբանական շփոթ և չխաթարելով դրանց էությունը:

Պետք է նշել, որ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման ինստիտուտը, չնայած դատական վերանայման՝ վերաքն-

նության, վճռաբեկության, հիմնարար խախտման, իսկ Նախագծով նաև հատուկ վերանայման կառուցակարգերի հետ որոշ ընդհանուր գծեր ունենալուն, այնուամենայնիվ, իր առանձնահատկություններով էականորեն տարբերվում է վերջիններից:

Այսպես, քննարկվող ինստիտուտի ամենակարևոր տարբերակիչ գիծը վերաքննությունից և վճռաբեկությունից այն է, որ, ի տարբերություն վերջինների, երբ դրանց միջոցով վերանայվում են օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, սույն ինստիտուտի միջոցով վերանայվում են բացառապես օրինական ուժի մեջ մտած ու ոչ միայն դատական, այլև մինչդատական վարույթում կայացված վերջնական ակտերը:

Բացի այդ, եթե վերաքննությունն ու վճռաբեկությունը կարող են կիրառվել համապատասխանաբար բացառապես վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից, ապա նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայումը կարող է իրականացվել ինչպես վերաքննիչ, այնպես էլ վճռաբեկ դատարաններում, իսկ ըստ Նախագծի 200-րդ հոդվածի 3-րդ մասի՝ նաև ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Ի տարբերություն վերաքննիչ և վճռաբեկ վերանայման՝ նշենք նաև, որ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման ժամանակ կողմերի միջև առկա է ասիմետրիա՝ ի շահ մեղադրյալի: Դրա հետ կապված՝ եվրոպական դատարանը նշել է, որ բացառիկ վերանայման պարագայում (հիմնարար խախտում և նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ) պետական մարմինների կողմից թույլ տրված սխալները և թերությունները պետք է մեկնաբանվեն հօգուտ ամբաստանյալի:

«Այլ կերպ ասած՝ քրեական հետապնդման մարմինների կամ նույնիսկ դատարանի կողմից սխալների իրականացման ռիսկը պետք է կրի պետությունը, և այդ սխալները չպետք է ուղղվեն ի հաշիվ շահագրգիռ անձի»,- նշվում է եվրոպական դատարանի կողմից:

Այսպիսով, ի շահ շահագրգիռ անձանց՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բացառիկ վերանայման հիմքով նորոգման համար անհրաժեշտ է հիմնավորել խախտման առավել համոզիչ ակնհայտությունը կամ առավել ծանր բնույթը, քան վերաքննության կամ վճռաբեկության դեպքում⁸:

Զննարկվող ինստիտուտը վերաքննությունից և վճռաբեկությունից տարբերվում է նաև մի շարք այլ գործոններով՝ օրինակ՝ հիմքերով, ժամկետներով, դատավարական կարգով (վերաքննության և վճռաբեկության դեպքում չի հարուցվում Գործող օրենսգրքի 426.5-րդ, իսկ Նախագծով՝ 411-րդ հոդվածով նախատեսված վարույթը):

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ինչ վերաբերում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման և Նախագծով նախատեսված հատուկ վերանայման կառուցակարգերի հարաբերակցությանը, ապա նշենք, որ վերջինս քննարկվող ինստիտուտից տարբերակվում է բազմաթիվ գործոններով, որոնց մեջ առավել ընդգծված և հիմնական տարբերությունն այն է, որ, ի տարբերություն հատուկ վերանայման, որի միջոցով վերանայվում են օրինական ուժի մեջ չմտած և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ապա նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, վերանայվում են գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտերը:

Քննարկվող երկու կառուցակարգերի հարաբերակցության հետ կապված՝ ցանկանում ենք անդրադառնալ նաև Նախագծի 358-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 415-րդ հոդվածի 3-րդ մասերին:

Այսպես, Նախագծի 415-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությամբ սահմանվել է, որ բացառիկ վերանայման արդյունքում կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ինչից ուղղակիորեն հետևում է, որ ուժի մեջ մտնելու սույն կանոնը հավասարապես վերաբերում է թե՛ վերաքննիչ, թե՛ վճռաբեկ դատարանում բացառիկ վերանայմանը:

Գրա հետ կապված՝ Նախագծի 358-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրվել է. «Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայումը կիրառվում է, երբ բողոքարկվում են վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման արդյունքում կայացված դատական ակտերը, բացառությամբ բացառիկ վերանայման դեպքերի», իսկ դրան համապատասխան՝ Նախագծի 415-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանվել է, որ վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը վճռաբեկ դատարանում կարող է վերանայվել Նախագծով սահմանված հատուկ վերանայման կարգով:

Նախագծի նշյալ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ըստ Նախագծի՝ բացառիկ վերանայման հիման վրա վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը, որն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, որպես հատուկ վերանայման կառուցակարգի ընդհանուր կանոնից բացառություն (ըստ Նախագծի՝ այն գործադրվում է օրինական ուժի մեջ չմտած և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի նկատմամբ), կարող է հատուկ վերանայման կարգով վերանայվել վճռաբեկ դատարանում:

Նախագծով նման կարգավորման սահմանումը, մեր կարծիքով, չի բխում res judicata դոկտրինայի հիմքում ընկած իրավական որոշակիության

կոնվենցիոնալ հիմնադրույթի պահանջներից և արդյունքում հակասում է վերջինիս:

Սույն սկզբունքը ենթադրում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կարող է վերանայվել միայն բացառիկ դեպքերում (նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, հիմնարար խախտում), այլ ոչ թե պարզապես գործը կրկին քննելու և գործով նոր վճիռ կայացնելու նպատակով, ուստի կարծում ենք, որ Նախագծով սահմանված այդ կարգավորումները փոփոխման և շտկման կարիք ունեն:

Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով և հիմնարար խախտման հիմքով բացառիկ վերանայման մեխանիզմների հարաբերակցության առումով անհրաժեշտ ենք համարում Գործող օրենսգրքի և Նախագծի համատեքստում մատնանշել վերջիններիս հետևյալ նմանություններն ու տարբերությունները.

1. Թե՛ Գործող օրենսգրքով, թե՛ Նախագծով բացառիկ վերանայման սույն կառուցակարգերով վերանայման են ենթակա գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Սակայն, ցանկանում ենք նշել, որ, եթե Գործող օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ ՍԴՌ-935 որոշման վերլուծությունից հետևում է, որ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման են ենթակա նաև մինչդատական վարույթում կայացված վերջնական ակտերը, ապա Գործող օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասից հետևում է, որ դրանք հիմնարար խախտման հիմքով վերանայման ենթակա չեն: Ինչ վերաբերում է սույն հարցի կապակցությամբ Նախագծով սահմանված կարգավորումներին, ապա նշենք, որ չնայած Նախագծի 25-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետից հետևում է, որ մինչդատական վարույթում կայացված վերջնական ակտերը Նախագծով սահմանված ժամկետներում նույնպես ենթակա են վերանայման հիմնարար խախտման հիմքով, սակայն Նախագծի 200-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում է, որ այդ որոշումները համապատասխան ժամկետներն անցնելուց հետո կարող են վերացվել բացառապես նոր հանգամանքների հիմքով, այսինքն՝ չեն կարող վերացվել նաև հիմնարար խախտման հիմքով:

2. Թե՛ Գործող օրենսգրքով, թե՛ Նախագծով վերանայման սույն կառուցակարգերի համար սահմանված կանոնների շրջանակներում վերջիններս իրարից առաջին հերթին տարբերվում են իրենց հիմքերի բնույթով: Այսպես, եթե նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման հիմքերի բնույթն այնպիսին է, որ դրանք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործի քննության ժամանակ, ապա հիմնարար խախտ-

www.lawinstitute.am

ման դեպքում, հակառակը, գործի ճիշտ լուծման համար բոլոր հանգամանքները եղել են հայտնի, սակայն դատարանը թույլ է տվել հիմնարար նշանակություն ունեցող խախտում:

Հիմքերի հետ կապված՝ ցանկանում ենք նշել նաև, որ, եթե Գործող օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմնարար խախտման հիմքերը լի են գնահատողական հասկացություններով, ապա Նախագծի 409-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ դրանք արդեն իսկ սահմանվել են հստակ և սպառիչ կերպով:

3. Գործող օրենսգրքով սույն կառուցակարգերը տարբերվում են նաև վերջիններիս համար սահմանված կանոններով. եթե հիմնարար խախտման հիմքով վերանայման համար սահմանվել են վերաքննության և վճռաբեկության համար սահմանված գրեթե բոլոր կանոնները (բացառությամբ, օրինակ, բողոքարկման ժամկետների¹¹ կամ վերաքննության համեմատությամբ բողոքարկման սուբյեկտների), ապա նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վարույթը կանոնակարգվել է օրենսգրքի առանձին բաժնում:

Ինչ վերաբերում է Նախագծին, ապա վերջինիս 50-րդ գլխի ուսումնասիրությունից հետևում է, որ բացառիկ վերանայման բողոքարկման սուբյեկտները, բողոք բերելու ժամկետները (բացառությամբ ներքոհիշյալ դեպքի), բողոքին ներկայացվող պահանջները, բացառիկ վերանայման արդյունքում իրականացվող դատական գործողությունները կամ կայացվող դատական ակտերը թե՛ նոր հանգամանքներով, թե՛ հիմնարար խախտման հիմքով վարույթների համար նույնն են, սակայն այդ կառուցակարգերը իրարից տարբերվում են

նաև այլ գործոններով:

Այսպես, եթե ըստ Նախագծի 410-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատական ակտը հիմնարար խախտման հիմքով՝ արդարացվածի (դատապարտյալի) վիճակի վատթարացման պահանջով, կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում, ապա նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արդարացման դատավճռի կամ վարույթը կարճելու, կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով թույլատրվում է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում:

Բացի այդ, ի տարբերություն հիմնարար խախտման հիմքով վարույթի, որի ժամանակ չի հարուցվում նախնական վարույթ, ըստ Նախագծի 411-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Նախագծի 409-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված նոր հանգամանքների առերևույթ առկայության դեպքում դատախազի կողմից հարուցվում է նախնական վարույթ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոշարադրյալը, կարելի է փաստել, որ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բացառիկ վերանայման մեխանիզմը, չնայած դատական վերանայման մյուս կառուցակարգերի հետ որոշ ընդհանուր գծեր ունենալուն, այնուամենայնիվ, էականորեն տարբերվում է դրանցից և հանդիսանում է վերանայման ինքնուրույն և անկախ վարույթ:

¹ Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերանայման ենթակա են ոչ միայն դատական, այլև մինչդատական վարույթում կայացված վերջնական ակտերը (այդ մասին մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ ՄԳՈ-935 որոշումը):

² Հարկ ենք համարում նշել, որ նոր հանգամանքներով («իրավունքի» հարցեր) գործերի նորոգման ձևը ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի մուտք է գործել միայն 2004 թվականի (դեկտեմբերի 14, ՀՕ-57-Ն) փոփոխություններից հետո:

³ Տե՛ս Ղազինյան Գ.Ս., Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան, 2001թ., էջ 397:

⁴ http://parliament.am/draft_docs5/K-084lrlr.pdf

⁵ Դատական վերանայման տարրերի՝ ըստ բնականոն և բացառիկ վերանայման եղանակների դասակարգման մասին մանրամասն տե՛ս Դատավորի ձեռնարկ, գիտագործնական վերլուծություն, Երևան, 2010թ., էջեր 294-295:

⁶ Տե՛ս Գործող օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մաս:

⁷ Տե՛ս Սեյիբյան Ռ., Սուջյան Տ., Դատական վերանայման հիմնահարցերի կանոնակարգումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում, «Պետություն և իրավունք» հանդես, N1 (59), Երևան, էջեր 32-33:

⁸ Տե՛ս Ռադչիկովն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, զանգատ թիվ 65582/01, կետ 50, 2007թ., Քսերաժն ընդդեմ Ալբանիայի վճիռը, զանգատ թիվ 37959/02, կետ 58, 2008թ.:

⁹ Տե՛ս Դատավորի ձեռնարկ, գիտագործնական վերլուծություն, Երևան, 2010թ., էջ 334:

¹⁰ Այդ մասին մանրամասն տե՛ս Ռ-յաթիխն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, զանգատ թիվ 52854/99, կետեր 51-52, 2003թ., Բրունարեսկուն ընդդեմ Ռումինիայի վճիռը, զանգատ թիվ 28342/95, կետեր 61-62, 1999թ., Նեյլուբինն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, զանգատ թիվ 14502/04, կետեր 22-23, 2006թ., Պռավեդնայասն ընդդեմ Ռուսաստանի

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վճիռը, գանգատ թիվ 69529/01, կետեր 24-25, 2004թ., Քսերաժն ընդդեմ Ալբանիայի վճիռը, գանգատ թիվ 37959/02, կետեր 51-53, 2008թ., Սալինսկի ընդդեմ Ուկրաինայի վճիռը, գանգատ թիվ 6965/02, կետեր 23, 28, 2006թ., Նիկիտին ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատ թիվ 50178/99, կետեր 54-57, 2004թ.: Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակությանը մանրամասն անդրադարձել են նաև ՀՀ վճռաբեկ, ինչպես նաև սահմանադրական դատարանները (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 13-ի քաղաքացիական գործով թիվ ԱԲԳ/0062/02/09, 2011 թվականի մայիսի 27-ի քաղաքացիական գործով թիվ ԵՇԳ/0473/02/10, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ ՍԳՈ-984 որոշումներ):

Նշենք, որ Նախագծի նշյալ դրույթները կարող են տարաբնույթ մեկնաբանվել. նախ՝ կարող է մեկնաբանվել այնպես, որ Նախագծի 25-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը հակասում է 200-րդ հոդվածի 3-րդ մասին, երկրորդ՝ չկա հակասություն, քանի որ 25-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը, որտեղ շեշտվում է ժամկետների առկայությունը, վերաբերում է 200-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին:

Ընդ որում, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Գործող օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից և 412-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում հիմնարար խախտման հիմքով բողոքարկման ժամկետների հարցում օրենսդիրը դրսևորել է տարբերակված մոտեցում, ինչն արդարացված չէ (տե՛ս Դատավորի ձեռնարկ, գիտագործնական վերլուծություն, Երևան, 2010թ., էջ 358):

Армен Оганесян

Ведущий специалист юридического отдела аппарата правительства РА,
аспирант кафедры юриспруденции отдела права и международных
отношений Европейской образовательной и региональной академии

РЕЗЮМЕ

Соотношение института исключительного порядка пересмотра на основании новых или вновь открывшихся обстоятельств с иными механизмами судебного пересмотра (сравнительно-правовой анализ действующего уголовно-процессуального кодекса и проекта нового кодекса)

В настоящей статье в свете сравнительно-правового анализа действующего Уголовно-процессуального кодекса и Проекта представляется вопросы соотношения института пересмотра окончательных правовых актов на основании новых или вновь открывшихся обстоятельств с иными механизмами судебного пересмотра. В частности, автор исследует особенности данных механизмов, их сходства и различия, выявляет пробелы действующего регулирования и попытки их решения в Проекте, а также выдвигает некоторые законодательные инициативы.

Автор приходит к выводу, что несмотря на то обстоятельство, что пересмотр по новым и вновь открывшимся обстоятельствам имеет некоторые общие черты с другими механизмами судебного пересмотра, но существенно отличаются от последних и является самостоятельным видом судопроизводства.

Ключевые слова: *новые или вновь открывшиеся обстоятельства, апелляция, кассация, существенное нарушение, итоговые и промежуточные судебные акты.*

Armen Hovhannisyan

Leading specialist of the legal department of the Government staff of RA,
postgraduate of the chair of jurisprudence of the department of law
and international relations of European educational and regional academy

SUMMARY

The correlation between the institute of the exceptional revision due to new or newly discovered facts and the other mechanisms of judicial review (comparative legal analysis of the current code of criminal procedure of RA and the draft of the new code)

The article in the light of comparative legal analysis of the current code of criminal procedure of RA and the Draft presents the problems of correlation between the institute of the exceptional revision due to new or newly discovered facts and the other mechanisms of judicial review. In particular the author discusses the features, similarities and differences of those mechanisms, brings out the defects of the existent regulations and the attempts of its solutions in the Draft, makes several legislative proposals.

In the conclusion the author can state though the institute of the exceptional revision by new or newly discovered facts has some commonalities with the other mechanisms of judicial review, it is essentially distinguished from them and is a substantive proceeding.

Keywords: *new or newly discovered facts, appeal, cassation, fundamental defect, final and interim judicial acts.*